Հաշվետվություն

2019 թվականի դեկտեմբերի 9-11-ը Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա) գործուղման արդյունքների մասին

1. **Անուն, ազգանունը.**

   Հակոբ Ավագյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Քաղաք Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, 9-11 դեկտեմբերի 2019թ.

4. **Հրավիրող կողմը.**

   ՌԴ աշխատանքի և զբաղվածության դաշնային ծառայություն

5. **Գործուղման նպատակը.**

   Մասնակցել ԱՊՀ երկրների և Մոնղոլիայի աշխատանքի տեսչությունների տարածաշրջանային դաշինքի գլխավոր կոնֆերանսին:

6. **Քննարկված թեմաները.**

   ԱՊՀ երկրների և Մոնղոլիայի աշխատանքի տեսչությունների տարածաշրջանային դաշինքի (այսուհետ՝ Դաշինք) մասնակից երկրների կողմից հնչեցին զեկույցներ աշխատանքի տեսչական համակարգերում վերջին փոփոխությունների և ձեռքբերումների, ինչպես նաև աշխատանքի անվտանգության ապահովման ոլորտում պետական վերահսկողության օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ: Խոսվեց Դաշինքի գործունեության և զարգացման հեռանկարների, մասնավորապես՝ նոր մեխանիզմների ներդրման հնարավորությունների, աշխատանքի տեսչության ազգային համակարգում փոփոխությունների և գործունեության փորձի մասին: Ներկայացվեց աշխատանքի տեսչությունների վերաբերյալ Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) ընդհանուր ռազմավարությունը, աշխատանքի տեսչությունների գործունեության ռազմավարական պլանավորման և աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման վերաբերյալ ԱՄԿ մոտեցումը:

Դաշինքի մասնակից երկրների միջև տեղի ունեցան նաև պանելային քննարկումներ՝ կազմակերպություններում տարբեր ռիսկերի վերաբերյալ:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

2019 թվականի դեկտեմբերի 10-ին և 11-ին տեղի ունեցավ Դաշինքի գլխավոր կոնֆերանսը: Կոնֆերանսի առաջին օրը՝ դեկտեմբերի 10-ին, ողջույնի խոսքով հանդես եկան ՌԴ աշխատանքի և զբաղվածության դաշնային ծառայության ղեկավար Մ.Յ. Իվանկովը, ՌԴ աշխատանքի և սոցիալական պաշտպանության նախարարության ներկայացուցիչը, ԱՄԿ փոխտնօրեն Ալ-Խալդի Խոլուդը: Վերջինիս հետ հանդիպման ընթացքում քննարկվեցին ԱՄԿ-ի և ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի միջև համագործակցության վերաբերյալ հարցեր:

Ուզբեկստանի Հանրապետությունը ստորագրեց լրացուցիչ համաձայնագիր՝ Դաշինքի կազմում ընդգրկվելու մասին:

Համաժողովին ելույթով հանդես եկավ ՌԴ Աշխատանքի և զբաղվածության դաշնային ծառայության ղեկավարի տեղակալ, Աշխատանքի տեսչությունների միջազգային ասոցիացիայի փոխնախագահ Ի.Ի.Շկլովեցը և ներկայացրեց Դաշինքի 2019 թվականի գործունեության արդյունքների վերաբերյալ զեկույցը, ներկա փուլում աշխատանքի տեսչությունների մարտահրավերներն ու հնարավորությունները:

Կոնֆերանսի շրջանակներում տեղի ունեցավ «Աշխատանքի դաշնային տեսչության համակարգում լավագույնը մասնագիտության մեջ - 2019» մրցույթի հաղթողների մրցանակաբաշխությունը:

Ելույթով հանդես եկան Դաշինքի մասնակից երկրների ներկայացուցիչները՝ աշխատանքի պետական տեսչության ազգային համակարգում փոփոխությունների, գործունեության փորձի և զարգացման հեռանկարների վերաբերյալ իրենց ելույթներով:

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանը հանդես եկավ ողջույնի խոսքով, այնուհետև ներկայացրեց օրենսդրական վերջին փոփոխությունները, որոնցով 2021 թվականի հուլիսից սկսած հայաստանյան տեսչական մարմնի լիազորություններն ընդլայնվում են: Ապա ներկայացրեց տեսչական մարմնի 2019 թվականի գործունեության

արդյունքների և կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ զեկույցը՝ անդրադարձ կատարելով այն ընդհանուր խնդիրներին, որոնք պահանջում են համակարգված մոտեցում Դաշինքի անդամ երկրների կողմից: Մասնավորապես՝ Հակոբ Ավագյանն առաջարկեց Դաշինքի շրջանակներում դիտարկել աշխատողների իրավունքների պաշտպանությանն ուղղված արագ արձագանքման մեխանիզմի ներդրման հարցը ՀՀ այն քաղաքացիների համար, ովքեր աշխատում են Ռուսաստանի Դաշնությունում և չգիտեն ուր և ինչպես դիմել իրենց ոտնահարված աշխատանքային իրավունքները վերականգնելու համար:

Ռուսական կողմը համաձայնեց Հակոբ Ավագյանի առաջարկը ներառել Դաշինքի 2020 թվականի աշխատանքային ծրագրի մեջ և միասնական առաջարկ ներկայացնել ԱՊՀ երկրների ղեկավարներին:

Ելույթով հանդես եկան Բելառուսի Հանրապետության աշխատանքի և սոցիալական պաշտպանության նախարարության աշխատանքի պետական տեսչության տնօրեն Վ.Ի. Սիդորովիչը, Ղազախստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական պաշտպանության նախարարության աշխատանքի, սոցիալական պաշտպանության և միգրացիայի հանձնաժողովի նախագահի տեղակալ Տ.Կ. Օսպանկուլովը, Ղրղզստանի Հանրապետության կառավարությանն առընթեր բնապահպանական և տեխնիկական անվտանգության պետական տեսչության աշխատանքի պաշտպանության բաժնի պետ Բ.Կ. Ջոլչիևը, Աշխատանքի և զբաղվածության դաշնային ծառայության ղեկավարի տեղակալ, Աշխատանքի տեսչությունների միջազգային ասոցիացիայի փոխնախագահ Ի.Ի.Շկլովեցը և այլոք:

Կոնֆերանսի երկրորդ օրը՝ դեկտեմբերի 11-ին, ՌԴ Աշխատանքի և զբաղվածության դաշնային ծառայության ղեկավարի տեղակալ, Աշխատանքի տեսչությունների միջազգային ասոցիացիայի փոխնախագահ Ի.Ի.Շկլովեցը ներկայացրեց դաշնային ծառայության 2019 թվականի գործունեության արդյունքները, մասնավորապես՝ դժբախտ դեպքերի վերաբերյալ վիճակագրական տվյալները և բնագավառի կարգավորմանն ուղղված նոր իրավակարգավորումները: Այնուհետև՝ դաշինքի անդամ երկրների ներկայացուցիչները մասնակցեցին աշխատանքի պաշտպանությանը և

անվտանգությանը նվիրված Միջազգային մասնագիտացված 23-րդ ցուցահանդեսին, որի շրջանակներում տեղի ունեցան կազմակերպություններում ռիսկերի գնահատման վերաբերյալ պանելային քննարկումներ, ինչպես նաև մասնակիցները ծանոթացան անհատական պաշտպանության միջոցների ժամանակակից արտադրատեսակներին:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝ հարցի վերաբերյալ ընդունվեց հետևյալ որոշումը.**

Օրակարգի 1-ին կետ.

Աշխատանքի և զբաղվածության դաշնային ծառայության ղեկավարի տեղակալ, Աշխատանքի տեսչության միջազգային ասոցիացիայի փոխնախագահ Ի.Ի.Շկլովեցի կողմից Դաշինքի 2019 թվականի աշխատանքային ծրագրով նախատեսված աշխատանքների ամփոփում:

Հարցի վերաբերյալ ընդունվեց հետևյալ որոշումը.

Դաշինքի 2019 թվականի աշխատանքային ծրագրով նախատեսված իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

Օրակարգի 2-րդ կետ.

Ներկայացվեց Ուզբեկստանի Հանրապետության կողմից Դաշինքին անդամակցելու առաջարկությունը:

Հարցի վերաբերյալ ընդունվեց հետևյալ որոշումը.

Ուզբեկստանի Հանրապետության կողմից ստորագրվեց Դաշինքի կազմում ընդգրկվելու մասին լրացուցիչ համաձայնագիր:

Օրակարգի 3-րդ կետ.

Դաշինքի գործունեության և զարգացման հեռանկարների վերաբերյալ քննարկումներ և առաջարկություններ:

Հարցի վերաբերյալ ընդունվեց հետևյալ որոշումը.

Դաշինքի գործունեության և զարգացման հեռանկարների վերաբերյալ քննարկումներն ամփոփել և առաջարկությունները ներկայացնել Դաշինքի գործադիր կոմիտե:

Օրակարգի 4-րդ կետ.

ԱՊՀ մասնակից երկրների և Մոնղոլիայի աշխատանքի տեսչությունների տարածաշրջանային դաշինքի անդամների զեկույցներ՝ աշխատանքի ոլորտում պետական վերահսկողության վերջին փոփոխությունների վերաբերյալ:

Հարցի վերաբերյալ ընդունվեց հետևյալ որոշումը.

Դաշինքի մասնակից երկրների զեկույցներն ընդունել ի գիտություն:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

   ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանն առաջարկեց Դաշինքի շրջանակներում քննարկել բողոքների ընդունման ընդհանուր մեխանիզմի ներդրման հնարավորությունը, ըստ որի՝ Դաշինքի անդամ երկրների այն քաղաքացիները, ովքեր աշխատում են ՌԴ-ում, կարող են իրենց դիմումներն ուղարկել իրենց հիմնական բնակության երկիր, որտեղից դիմումը կվերահասցեագրվի ՌԴ-ում համապատասխան ոլորտում վերահսկողություն իրականացնող պետական մարմնին:

   Որոշվեց առաջարկը ներառել Դաշինքի 2020 թվականի աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումների ցանկում:

   Հակոբ Ավագյանի կողմից ներկայացվեց առաջարկություն այն մասին, որ 2021 թվականի Դաշինքի նախագահությունը և Դաշինքի 10-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպումը ստանձնի Հայաստանի Հանրապետությունը:

10. **Գործուղվողը, ստորագրությունը, ամսաթիվը.**

    Հակոբ Ավագյան

    16.12.2019թ.